

## ԲԵՐԱՆԱՅԻՆ ՀԵՂՈՒԿԻ ԲՅՈՒՐԵՂԱԳՈՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԽՈՂՆԵՐԻ ՄՈՏ

Ավագյան Լ.Ա.<sup>1</sup>, Բադալյան Գ.Ռ.<sup>2</sup>, Հարությունյան Ա.Վ.<sup>3</sup>, Անդրիասյան Լ.Հ.<sup>4</sup>

<sup>1</sup> ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվ. առողջապահության ազգային ինստիտուտի թերապևտիկ ստոմատոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

<sup>2</sup> ՀՀԳԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի էլեկտրոնամանրադիտակային կենտրոն, Երևան, Հայաստան

<sup>3</sup> Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի թերապևտիկ և ընտանեկան ստոմատոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

<sup>4</sup> Հայկական բժշկական ինստիտուտի մանկական ստոմատոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

Կենսաբանական հեղուկի ֆիզիկաքիմիական հատկությունների բազմակողմանի ուսումնասիրությունները կարևոր նշանակություն ունեն բերանի խոռոչի հյուսվածքների, մասնավորապես՝ պարոդոնտի հիվանդությունների ախտաճնության ու կլինիկական առանձնահատկությունների հետազոտման մեջ, ծխախոտի ծխի տարբեր փասակար գործոնների ազդեցության պայմաններում:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության նպատակն է՝ բերանային հեղուկի բյուրեղագոյացման ձևաբանական առանձնահատկությունների տեսաձրող էլեկտրոնային-մանրադիտակային համեմատական հետազոտումը ծխող և չծխող անձանց մոտ: Նատիվ բերանային հեղուկը հավաքվել է 20-30 տարեկան 120 տղամարդուց՝ առավոտյան 9<sup>00</sup>-90<sup>30</sup> ժամանակահատվածում, անոթի: Հետազոտվողները բաժանվել են 2 հիմնական խմբերի. Ա խումբ - գինգիվիտով հիվանդներ (Ա1 ծխողներ - 34 անձ և Ա2 չծխողներ - 26 անձ), Բ խումբ - առողջ անձինք (Բ1 ծխողներ - 31 անձ և Բ2 չծխողներ - 29 անձ): Տեսաձրող էլեկտրոն-մանրադիտակային հետազոտությունն իրականացվել է VEGA TS 5130MM մանրադիտակով:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ծխող և չծխող անձանց միջև գոյություն ունեն բերանային հեղուկի բյուրեղագոյացման քանակական ու որակական բնութագրերի հստակ տարբերություններ: